Armenian

Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի
Միջազգային հոգեբանության բաժանմունքի
համառոտ պատմությունը

Ջոն Հոգան (պատմաբան)
Հարոլդ Թաֆուշյան (բաժանմունքի պրեզիդենտ)

Բազմաթիվ տարիների նախապատրաստական աշխատանքից հետո, 1997 թվականի փետրվարի 21-ին Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի (ԱՀԱ) առաջնակարգ մասնագետների կողմից հիմնադրվեց ԱՀԱ-ի 52-րդ՝ «Միջազգային հոգեբանություն» բաժանմունք, որի առաքելությունն է՝ «հարակից գիտելիքների բնագավառների հոգեբանների ազգամիջյան կապերի հետագա զարգացում և ամրապնդում, փոխայցելությունների, միջմշակութային հետազոտությունների, կլինիկական պրակտիկայի փոխըմբռնման քաջալերում, ինչպես նաև ԱՀԱ-ի ընդհանուր խնդիրների իրականացմանը նպաստում»:

Առաջին վեց տարիներին Բաժանմունք 52-ը դարձավ ԱՀԱ-ի արտակարգ ակտիվ մասնակիցը հետևյալ առումներով.

1. Խմբագիր Իվան Կոսի նախաձեռնությամբ Բաժանմունք 52-ը հրատարակում է «Միջազգային տեղեկագիր» ամսաթերթը, որը ներկայացնում է աշխարհի զանազան երկրների հոգեբանության վերաբերյալ նյութեր՝ գրված առաջնակարգ հոգեբանների կողմից:
2. Կայքի մասնագետներ ՈՒիլյամ Մաստենի և Մուստաֆա Բալոգլուի նախաձեռնությամբ ստեղծվել է www.apa.org/divisions ինտերնետային կայքը:
3. Իր անդամներին, անդամակցության թեկնածուներին, աշխատողներին և ուսանողներին առաջարկում է կայքի տարածք (web board) և ցուցակային սերվերներ (list servers):
4. Յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսին Բաժանմունք 52-ը կազմակերպում է մի ծրագիր, որտեղ բաժանմունքի անդամները և այլ անձինք ներկայացնում են իրենց հետազոտական աշխատանքները: 1998 թվականի ծրագրում ներկայացված են եղել 39 երկրների 120 հոգեբաններ:
5. Յուրաքանչյուր տարի Բաժանմունք 52-ը ստանում է անվանացանկեր ամենամյա պատվավոր պարգևատրումների համար հետևյալ անվանումներով՝ միջազգային հոգեբան, թեմայի ղեկավար, հետազոտող ուսանող, թեզ պաշտպանող, ֆեմինիզմի և գենդերային հետազոտությունների բնագավառի հետազոտող:
6. Բաժանմունք 52-ն իր անդամներին ակտիվորեն ներգրավում է առավել կարևոր հետազոտական նախագծերում, ստեղծված է միջազգային ներկայացուցիչների (Liaisons) ինտերնետային ցանց: Բաժանմունք 52-ի անդամները կարող են գրքերի և այլ նյութերի գնումներ կատարել զեղչով:

Ի սկզբանե բաժանմունքը ստացել է ԱՀԱ-ի ղեկավարների (ներառյալ ԱՀԱ-ի գլխավոր կատարողական տնօրեն Ռայմոնդ Ֆաուլերի) ակտիվ օժանդակությունը: Բաժանմունք 52-ի առաջին 7 նախագահներից 4-ը նախկինում եղել են ամբողջ ԱՀԱ-ի նախագահը (նշված են աստղանիշով)՝ Էռնստ Բեյեր, Ֆլորենս Դենմարկ*, Գլորիա Գոտսեգեն, Ֆրանկ Ֆարլի*, Զարլզ Սպիլբերգեր*, Հարոլդ Թաֆուշյան, Ռիչարդ Վելայո, Նորման Աբելես*: Այս նոր բաժանմունքը սերտորեն համագործակցում է 1944 թվականին կազմավորված ՀՄՀԿ-ի (Հոգեբանության ոլորտի

միջազգային հարաբերությունների կոմիտեի) հետ, որի միջոցով ԱՄՆ-ի և ողջ աշխարհի հոգեբաններն ու ուսանողները կարող են դառնալ ԱՀԱ-ի Միջազգային բաժանմունքի անդամ՝ տարեկան մուծելով փոքր գումար. 2003-ին տարեկան անդամավճարը կազմել է 10 ԱՄՆ դոլար՝ ուսանողների և 20 ԱՄՆ դոլար՝ մասնագետների համար:

Բաժանմունք 52-ն այսօր միջազգային անդամակցություն ունեցող 6 հոգեբանական կազմակերպություններից մեկն է:

Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ առաքելությունը, որոնց մասին մանրամասնորեն գրված է Ջ. Բ. Օվերմիերի և Ջ. Օվերմիերի «Հոգեբանություն. հոգեբանական գիտությունների միջազգային միության գլոբալ ռեսուրսները» աշխատության մեջ, որ հրատարակվել է «Psychology Press»-ում և տեղադրված է www.psycpress.co.uk ինտերնետային կայքում:

Կազմակերպությունների մասին հակիրճ տեղեկություն

- Կիրառական հոգեբանության միջազգային ասոցիացիան կազմավորվել է 1920 թվականին, այժմ ունի 2000 անդամ աշխարհի տարբեր երկրներում, տպագրում է տարեկան 4 անգամ լույս տեսնող «Կիրառական հոգեբանության միջազգային տեսանկյունները» ամսագիրը և 4 տարին մեկ հրավիրում է կոնգրես: (www.iaapsy.org)
- Հոգեբանների միջազգային խորհուրդը հիմնադրվել է 1941 թվականին, այժմ ունի 1500 անդամ աշխարհի տարբեր երկրներում, տպագրում է «Միջազգային հոգեբան» ամսագիրը և իրականացնում է ամենամյա խորհրդակցություն: www.icppsych.tripod.com
- Միջմշակութային հոգեբանության միջազգային ասոցիացիան հիմնադրվել է 1972 թվականին, ունի 800 անդամ, տպագրում է «Միջմշակութային հոգեբանություն» երկամսյա ամսագիրը և հրավիրում է ժողով 2 տարին մեկ անգամ: www.iaccp.org
- Հոգեբանական գիտությունների միջազգային միությունը հիմնադրվել է 1951 թվականին, ունի 64 անդամ-պետություններ (անհատական անդամակցություն չունի), հրատարակում է «Հոգեբանության միջազգային ամսագիրը» և 4 տարին մեկ անգամ հրավիրում է «Հոգեբանության միջազգային կոնգրես»: www.iupsys.org
- Միջազգային հոգեբանության ուսանողական կազմակերպությունը 1999 թվականից կազմավորման փուլում է, և մի շարք երկրների ուսանողներ անդամակցում են նրան:

Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի Բաժանմունք 52-ի մասին մանրամասն տեղեկությունները տեղադրված են www.tamu-commerce.edu/orgs/div52 Aինտերնետային կայքում: